Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎԻԼՀԵԼՄ ՏԵԼԼ

Վ. ՕՍՏՐՈԳՈՐՍԿՈՒ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ)

891.71
O-71

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՀԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904.

5786
18 NOV 2011
891.71-3+[83]
Ս-74 49
1002/6373

ՎԻԼՀԵԼՄ ՏԵԼԼ

Վ. ՕՍՏՐՈԳՈՐՍԿՈՒ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ)

Բազմի Հայոց Հանրակրթական Դպրոց Եկեղ.-Ծխակ. (Երևան)
Հ. Ս. Հ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI 1922
Ս. ՍՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904.

09 SEP 2010

14560

Дозвол. ценз. С.-Петербургъ, 11 Мая 1904 г.

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

Բաղրամյան Հայոց Հոգևոր Դպրոց (Գիմնազիա) Եկեղ.-Ծիսակ. (Օրհներգ)

ՎԻԼՀԵԼՄ ՏԵԼԼ

Եւրոպայի հիւսիսային կողմերում մի ժամանակ ապրում էր մի մեծ ազգ։ Մի քանի տարի իրար եռևից նրանց հացի բերքը լաւ չէր լինում. այս պատճառով ամէն ինչ էլ թանդացաւ։ Մարդիկ հաւաքւեցին, խելք խելքի տուին ու շատ միտք անելուց յետոյ, ճարները կտրած՝ վճռեցին որ վիճակ ձգեն ամէն մի տասը հոգու մէջ. վիճակն ում որ ընկնի, նա թողնի իր հայրենիքն ու գնայ ուր որ ուզում է։ Էլ ուրիշ ճար չկար. հացն այնքան քիչ էր, որ ամենքին հերիք չէր անիլ։

Մի խումբ տղամարդ ու կին, տխուր ու տրտում, դուրս եկան և գնացին դէպի հարաւ։ Նրանք իրանց համար նոր ճանապարհ էին բաց անում, իսկ հարկաւոր եղած տեղը՝ թուրի զօռով էին ճղում և անց կենում։ Վերջապէս, խումբը հասաւ Ալպեան լեռներին, որոնք ամբողջովին ծածկւած էին թանձր անտառով.

այստեղ վեր եկան մի անմարդաբնակ ձորում, ուր մի նեղ գետակ կար և մի լիճ։ Տեղը բերքի կողմից շատ հարուստ էր ու գեղեցիկ, չորս կողմը ձիւնապատ սարերով պատած. բայց այստեղ, որ ասես, մարդու հետք չէր երևում։ Միայն լճի ափին մի քոսոտ խրճիթ կար. այնտեղ կենում էր մի նաւավար. եթէ հազարից մէկ մի մարդ պատահէր, նա անց էր կացնում նրան լճի միւս կողմը։ Բայց սրանց բաղդին էր թէ ինչ, այս անգամ լիճն այնպէս էր ալեկոծւում, այնպէս էր կատաղած, որ անկարելի էր միւս ափն անց կենալ և ոչ ոք էլ իսկի սիրտ չարաց։

Այս նոր եկած ազգը, որ հելուետ էր ասւում, մի լաւ մարդ եկաւ այս տեղերը և տեսաւ, որ սա անտառներով ու ջրերով շատ հարուստ երկիր է։ Դրանից յետոյ հելուետները մնացին այստեղ ու Շուից անունով մի գիւղ շինեցին։ Էհ, որքա՜ն քրտինք էն թափել նրանք, ի՜նչ ահագին ծառեր արմատահան արել, մինչև որ անանցնելի անտառները մաքրել են ծառերից. էլ ի՜նչ ասես, որ արած չլինեն. ճահիճներ են չորացրել, ժայռեր են կոտրատել ու յարմար ճանապարհներ են բաց արել անդունդների վերևներով. էլ ի՜նչ ասեմ, մի խօսքով, առաջւայ անմարդաբնակ ու լուռ վայրն այժմ

գեղեցիկ ու մարդկանցով լիքը մի տեղ էն շինել։

Իսկ երբ հելուետները տեսան, որ տեղը նեղուածք է իրանց, Ռէյն, Ռոնա և Աար գետերի մէջ գտնուած տեղերն էլ բռնեցին. դրանից յետոյ սկսեցին շուեյցարացի ասւել։ Ո՛վ գիտէ թէ քանի՛ հարիւր տարիներ էին ապրում նրանք այստեղ, սարերում հօտեր արածացնելով ու թեթևաշարժ քարայծների ետևից ընկած, չնայելով որ մարդուս կեանքն այդ տեղերում մի մազից էր կախուած։ Հովիւները ու որսորդները, որոնք իրանց ճակատի քրտինքով ու սեփական արիւնով էին մշակել իրանց նոր հայրենիքը, համարձակ ու աշխատասէր մարդիկ էին. նրանք միայն Աստծուց էին վախենում, էլ ուրիշ ոչ ոքից վախ չունէին։ Իրանք քաջառողջ տղամարդիկ ու լաւ նետաձիգներ լինելով, միշտ պատրաստ էին իրանց անձը պաշտպանելու։ Ապրում էին իրանց պապենական սովորութիւններով ու կարգերով։ Նրանց հողերովն անց էին կենում հազար տեսակ ազգութիւններ. այդ ազգերը միշտ ուզում էին նրանց տիրել, իրանց ձեռքի տակը գցել ու իրանց ճորտը դարձնել. բայց շուեյցարացիք, պաշտպանուած լինելով իրանց լաւ ծանօթ բարձր ու ամուր սարերով, կարողացան պինդ

պահել իրանց անկախութիւնը։ Աշխարհիս երեսին անկախութիւնից էլ թանդ ու լաւ բան չկար շուեյցարացիների աչքում։

Տասներեքերորդ դարում շուեյցարացիք երեք առանձին գիւղ, կամ նրանց լեզուով ասած, երեք կանտոն էին կազմում. այդ կանտոններն էին Շուից, Ուրի և Ունտերվալդեն, որոնց կառավարութիւնը, այսպէս ասած՝ ընդհանուր խորհրդի ձեռքին էր։ Այդ ընդհանուր խորհրդի համար շուեյցարացիք իրանց միջից ընտրում էին պատուաւոր ու փորձառու մարդկանց։

1273 թուականին Գերմանիայում, որ այն ժամանակւայ ամենամեծ տէրութիւնն էր Եւրոպայում, թագաւոր նստեց Ռուդոլֆ Հաբսբուրգը։ Այս Ռուդոլֆ թագաւորը Շուեյցարիայում շատ մեծ հողեր ունէր և հէնց երեխայութեան օրերից շուեյցարացիք նրան շատ էին սիրում, նրա բարի ու խաղաղ բնաւորութեան համար։ Երբ նա թագաւոր դարձաւ, շուեյցարացիք իրանց յօժար կամքով նրան իրանց գլխին հովանաւոր ընտրեցին, որ բան է, մարդասպանութիւն, կամ մի մեծ վէճ և կամ կռիւ պատահի, այն ժամանակ կարողանան գնալ նրա մօտ, որ իրանց գործը քննի և արդար դատաստան անի։ Իսկ իրանք իրանց մէջ կառավարում էին էլի առաջւայ պէս՝ ի-

բանց սովորութիւնների համեմատ։ Միայն մեծ գործ պատահած ժամանակ ինքը՝ Ռուդոլֆն էր գալիս Շուեյցարիա ու իր արդար դատաստանն անում բոլոր ժողովրդի աչքի առաջ, բաց երկնքի տակ։ Այս ամենի փոխարէն էլ շուեյցարացիք խօսք տուին, որ պատերազմ եղած ժամանակ գերմանացոց տէրութեանը օգնութիւն հասցնեն. և իսկ որ նրանք իրանց սիրելի թագաւորի համար իրանց արիւնը չէին խնայում։ Ռուդոլֆն էլ իր կողմից՝ իր մօտն եղած շուեյցարացիների հետ այնպէս քաղցր, այնքան լաւ էր վարւում, որ իսկի չեղած։ Շուեյցարացիք իրանց համար լաւ ապրում էին սարերումը՝ հանգիստ ու բաղդաւոր, առանց մարդու դիպչելու։

Բայց շատ չքաշեց նրանց ազատութիւնը։ 1291 թուականին Ռուդոլֆ կայսրը մեռաւ և նրա տեղը գերմանացոց գահը նստեց նրա Ալբրեխտ որդին։ Սա շատ ժլատ ու խստասիրտ, գոռոզ ու անմատչելի մարդ էր. նրան ոչ տեսնել էր լինում և ոչ էլ հեռը խօսել։ Նրա ուշքն ու միտքը շատ հարստանալն ու շատ հողեր խլել ու ձեռք գցելն էր միայն։ Ասպետները, որոնք Շուեյցարիայում հողեր ունէին, ուզում էին շուեյցարացիներին էլ, ինչպէս Գերմանիայի միւս տեղերում, ճորտեր դարձնեն։ Հէնց այդ

ասպետներն էին, որ Ալբրեխտին գլխից հանեցին. նրան պատմեցին, թէ շուեյցարացիք հպարտ, ինքնակամ ժողովուրդ են, թէ նրանք բազմաթիւ հօտեր ունեն և այլն։ Թագաւորն էլ այս ամենը լսելուց յետոյ ցանկացաւ, որ անպատճառ, ինչ էլ որ լինի, այդ հարուստ երկիրը նուաճի և իր ձեռքը դցի։

Նա առաջ սպառնալիքներով պահանջեց շուեյցարացիներից, որ իրանց կամքով դան ու հպատակուեն իրան։ Բայց շուեյցարացիք ոչ վախեցան նրանից և ոչ էլ եկան նրան խոնարհուելու։

Դրա վրայ Ալբրեխտը կատաղեց. Շուեյցարիա ուղարկեց իր երկու տեղականներին (լանդֆոխտ)—Հեսլերին ու Լանդսբերդին, և սրանց լիակատար իրաւունք տուեց, որ ինչ ուզում են անեն, միայն թէ նուաճեն այդ ինքնակամ, իր ասածի ազգին։ Տեղականները Շուեյցարիա հասան թէ չէ, իսկոյն սկսեցին սարսափելի, անասելի բաներ անել։ Նրանք թոյլ չէին տալիս, որ շուեյցարացիք իրանց ապրանքները երկրից դուրս բերեն ու ծախեն. ուրիշ երկրներից բերուող ապրանքներից հարկ էին առնում. մի ինչին յանցանքի համար, իբրև տուգանք, փող էին վերցնում։

Ծանր էր, շատ էր ծանր այդ ամենը շուեյ-

ցարացիներին. բայց ի՞նչ անէին. նրանք դեռ չէին մոռացել հանդուցեալ Թագաւորի բարի բնաւորութիւնը, նրա արած լաւութիւնները և այդ էր պատճառը, որ ամէն ինչ տանում էին առանց տրտնջալու։

Բայց քանի գնում էր, նեղութիւններն այնքան շատանում ու աւելի խիստ էին դառնում։ Ամեն տեղից օրէցօր աւելի վատ համբաւներ էին գալիս։

Մի օր Իրիկնադէմին, մի ձկնորս, մի հովիւ ու մի որսորդ՝ հաւաքուելով երեք կանտոնի լճի ափին, խօսում էին իրանց գործերից. հովիւը իր խաշներից էր խօսում, ձկնորսը՝ ձկներից, իսկ որսորդն, ի հարկէ, իր սիրելի որսերից էր պատմում։ Յանկարծ, հեկեկալով նրանց մօտն է վազում շուեյցարացի Կոնրադ Բաումգարտենը, արիւնի մէջ կոխած։

—Ի սէր Աստծու, ասում է նա ձկնորսին, ինձ անկայրու լճի միւս ափը. ի՞նչ ուզում է լինի, ի՞նչ ուզում ես արա՛, միայն թէ ինձ ազատիր. . .

Տեղակալի պահապանները, Բաումգարտենի ետևից ընկած, հալածում էին նրան։ Սպաներից մէկը, մի քանի զինուորների հետ, մտաւ խեղճի տունը, ինչ լաւ բան ոչ տեսաւ՝ վերցրեց, և կարծես այդքանը դեռ հերիք չէր, նրա

կնոջն էլ խայտառակեց։ Այս ամեն բռնութիւն-
ները տեսնելուց յետոյ, Բաումգարտենն էլ չկա-
րողացաւ համբերել ու տեղնուտեղը սպանեց
սպային։ Բայց մինչև նա կը պատմէր իր դարդը,
սաստիկ փոթորիկ բարձրացաւ. ձկնորսն էլ
սիրտ չարաց խեղճ մարդուն լճի միւս ափն
անց կացնել։

Նրա բաղդիցը հէնց այդ րոպէին Նրանց
մօտն եկաւ Վիլհելմ Տելլը։ Սա չդիմացաւ Բա-
ումգարտենի աղաչանք ու պաղատանքներին և
ձկնորսին ասաց, որ յետ անի կապած մակոյկը։

—Է՛հ, ինչ լինում է թող լինի, ասաց Տելլ.
յոյսներս դնենք Աստծու վրայ. ինչքան որ ուժ
կայ ինձանում՝ կը փորձեմ, Բաումգարտեն եղ-
բայր. դատաւորների ձեռքից ես քեզ կ՝ազա-
տեմ, իսկ փոթորիկից թող Աստուած ազատի։
Դու էլ, ձկնորս եղբայր, կնոջս կը մխիթարես,
եթէ, բան է, Աստուած մի արասցէ, գլխիս մի
փորձանք գալու լինի. նրան կ՝ասես թէ ես արի
այն, ինչ որ պարտաւոր է անելու ամեն մի քրիս-
տոնեայ։

Այս ասելուց յետոյ Տելլն ու Բաումգար-
տենը մակոյկ նստեցին ու գնացին։ Լիճը սաս-
տիկ կատղած էր, ալեկոծւում էր և մակոյկը
աշեղի նման այստեղից այնտեղ գցում։ Բայց
Տելլը, որ թիավարելում լաւ վարպետ էր, կա-

րողացաւ խեղճ մարդուն միւս ափն անց կաց-
նել ու այդպիսով ազատել տեղակալի զինուոր-
ների ձեռքից։ Հէնց որ նրանք նաւակի մէջ
նստած ափից մի քիչ հեռացան, տեղակալի
զինուորներն եկան, ու տեսնելով որ արդէն
բանը բանից անց է կացել, ճարները կտրած՝
ուզեցին իրանց վրէժը որևէ մէկից հանել. ցիրուա-
ցան արին խեղճ հովւի հօտերը և կրակ տւին
նրա աղքատիկ տունն ու տեղը այրեցին։

Մտքի տունն ընկած, գլուխը քաշ, նստած
էր իր տան դռանը հարուստ շուեյցարացի
Շտաուֆախերը։ Երէկ նրա տան մօտովն անց
էր կենում տեղակալը, որ նախանձն աչքերին՝
նայեց այն նոր շինութեանն ու ասաց. «օհ՜,
տեսէք ինչպէս են ապրում այստեղ շուեյցարա-
ցիք. ի՞սկ որ թագաւորի ապրուստ է եղել
սրանց ապրուստը։ Հը՞մ, մի քիչ էլ կացէք. շատ
չի քաշիլ ձեր այս տեսակ ապրուստը։»

—Վա՜յ իմ գլխին, տունս ձեռքիցս դուրս
է գալու, ասում էր ինքն իրան Շտաուֆախերը.
և այսպիսի դառն ու տխուր մտածմունքներից
գլուխն աւելի էր քաշ գցում, կարծես սրտիցը
մի ծանր քար էին կախել։ Նրա խելքը կինն
ազատեց նրան այդ ծանր ու տխուր մտքերից,
ասելով.

—Էլ ի՞նչ ես գլուխդ քաշ գցել. ի՞նչ տղա-

մարդ ես. գործ կատարելու, բան կատարելու տեղ՝ գլուխդ ես քաշ գցում։ Փառք Աստծու, խօ մենակ դու չես զզուած այդ անիրաւ տեղակալից. Մի՞թէ բոլոր կանտոններում քիչ մարդ կայ նրանից դժգոհ, նրան հակառակ. ի՛նչ կը լիներ, որ ամենքդ մի տեղ հաւաքուէիք և խելք խելքի տուած՝ միտք անէիք ու մի հնար գտնէիք ազատուելու այդ անօրէն ու ծանր լծից։ Չէ՞ս լսել իսկի, որ մեր ծերերն ասում են.

Մէկ մարդու կռիւը կռիւ չէ,
Շատ մարդկանց կռիւը մահ չէ։

—Ճշմարի՛տ որ, միտք արաց ինքն իրան Շտաուֆախերը. ամօթ ինձ. իմ կինս՝ թոյլ կնիկարմատ տեղովը, ինձ խելք է սովրեցնում. տես իսկի խելքս կտրե՞լ է. ի՛նչ տղամարդ եմ ես. կինս ինձանից համարձակ է, թէև նա կնիկարմատ է, ես տղամարդ։

Այս ասելով, նա վեր կացաւ նստած տեղից ու ձեռքը ճակտին քսելով՝ մտածում էր, թէ ի՛նչ կը լինի իր ընտանիքի վիճակը, եթէ գործը չյաջողի։ Նա մտածում էր և տեսնում, որ այդ դէպքում իսկ որ շատ դառնութիւններ կը գայ իր գլխին և որ իր ընտանիքն էլ չի պրծնիլ այդ ցաւերից։ Շտաուֆախերը ինքն իրան ասում էր. «պատերազմի, կռիւ ժամանակ ցիր ու ցան կը դառնան խաշները, շատ ու շատ

հայրեր կը կոտորուեն, քանի քանի տներ կը կործանուեն, հազարաւոր կանայք ու երեխաներ որբ և այրի ու անօգնական կը մնան... Բայց նրա կին Գերտրուդը իր հորից դուր չէր լսել հին պատմութիւններ. նա գիտեր թէ ինչպէս են շէյցարացիք կռիւներ արել իրանց հարևան ազգերի հետ. նա լսել էր, որ իրանց պապերն արիւնով ու ճակատի քրտինքով էին ներկել ու պարարտացել իրանց հողերը։

—Ի՞նչ անենք, ա՛յ մարդ, ինչո՞ւ ես այդպէս վախենում կռուից ու աւերմունքից, ասում էր Գերտրուդը. վնաս չկայ, թող ձեզ կոտորեն. կարծես թէ մեզ՝ կենդանի մնացածներիս, էլ ուրիշ ճար չի լինիլ. ի՞նչ ես կարծում, վախենում ես որ ձեզանից յետոյ մենք իսկոյն կ՚ընկնենք թշնամու ձեռքը, որ էլ բան չմնայ թէ մեր գլուխը չբերեն։ Չէ, այդ կողմից միամիտ կաց. մենք էլ մեր թոյլ տեղով ազատուելու դուռը կը գտնենք։ Փառք Աստծու, ինչ կայ. ժայռեր շատ կան. այս բարձր ժայռերից ինքներս մեզ կը գցենք անդունդներն ու կը պրծնենք նրանց ձեռքից։

Կնոջ վերջին խօսքերը շարժեցին Շտաուֆախերի սիրտը. կարծես այդ խօսքերը տղամարդութիւն ու համարձակութիւն տին նրան։ Նա բարձրացրեց մինչև այն ժամանակ կախ

գցած գլուխը, գրկեց կնոջն ու ասաց նրան.

—Զէ՛, ով քեզ պէս սրտոտ կին ունի, նրա համար աշխարհիս երեսին սարսափելի բան չկայ. նա վախ չունի, ուրախութեամբ կռիւ կ՚երթայ հայրենի հողի համար. քեզ նման կին ունեցողն իր կեանքը չի խնայիլ իր հայրենիքի օգտին զոհելու։ Դու տանը կաց, քո անտեսութիւնդ արա. միայն տես, աչքդ քեզ վրայ պահիր, որ ամեն մի ուխտ գնացող օտարական, ամեն մի վարդապետ, որ մեր տան շէմքովն անց կենան հանգստանալու համար, առանց կուշտ կերակուրի չմնան։ Ես գնում եմ կանտոնները, որ մեր գամ ու գտնեմ այնպիսի ընկերներ, որոնք հայրենիքի համար կարող են իրանց անձը զոհել։

Հէնց այդ միջոցումն էր, որ տեղակալն սկսեց մի բանդ շինել տալ Սլտդորֆում, անհնազանդ շէյցարացիների համար։ Այդ շինութեան վրայ շատ Ժողովուրդ էր բան անում. էլ ծեր ասես, էլ կին, էլ երեխայ, նրանց համար մէկ էր, ով էր հարցնում, թէ բան կարող է անել թէ ոչ. բոլորին էլ զօռով քշում էին այնտեղ և քար ու հող կրել տալիս, որ գործը շուտով գլուխ գայ։ Յոգնածութիւնից ոտները հաղիւ-հաղ քաշ տալով, խեղճ ժողովուրդը քար էր կրում հէնց իրան համար շինելիք բանդի

համար. իսկ վերակացուն՝ կոշտ ու կոպիտ յիշոցներ տալով, աշխատեցնում էր բանուորներին։

Ցանկարծ, որտեղից էր որտեղից չէր, մի թմբուկի ձայն եկաւ։ Զինուորների մի խումբ էր գալիս. հանդիսաւոր կերպով ձեռներին մի երկար ձող բռնած, որի ծայրին մի գլխարկ էր դրած, ծանր ու մեծ քայլերով առաջ էին շարժւում։ Ժողովրդի բազմութիւնը զարմացած՝ ընկել էր զինուորների ետևից և գնում էր ու չէր հասկանում, թէ սա ինչ նոր բան է հնարել տեղակալ Հեսլերը։ Զինուորներն այդ ձողը տնկեցին գետին. իսկ սպան բարձր ձայնով կարդաց տեղակալի հրամանը։ Հեսլերն ուզում է իմանալ, թէ ո՞վ է իրան հնազանդւում և ով չի հնազանդւում. և դրա համար էլ պահանջում է, որ իր գլխարկին էլ նոյն պատիւը տան, ինչ որ իրան են տալիս։ Նա հրամայում է, որ այդ գլխարկի մօտով ամեն մի անցուդարձ անող իր գլակը վերցնի և գլուխ տայ։ Իսկ ով որ այս հրամանը չկատարի, նա կը զրկւի իր ազատութիւնից և ունեցած չունեցածից։

Ունտերվալդեն կանտոնի բաներն էլ սրանից լաւ չէին։ Տեղակալի սպաներից մէկը եկել ու քշել տարել է Ծերունի Մելխթալի եղները։ Մելխթալի որդի Առնոլդը չկարողացաւ դիմանալ այն անպիտանի հասցրած վիրաւորանքին.

զորս դու պատիրեցեր, մի լաւ ծեծեց նրան, ճիպոտն էլ վրան կոտրատեց։ Վախենալով հալածանքից ու կամենալով կեանքն ազատել իր ծերունի հօր սիրուն, որովհետև նրա միւնուճարն էր, նա փախաւ գնաց մի ուրիշ կանտոն. բայց մի սարսափելի բան պատահեց։ Տեղակալը նրա հօրից պահանջեց որ որդու տեղն ասի։ Ծերը երդում կերաւ, որ ինքն էլ չգիտէ թէ որտեղն է իր որդին։ Այն ժամանակ այդ անասուածը կանչել տուեց դահիճներին, հրամայեց որ խեղճ ալևորին վեր դցեն գետին ու աչքերը հանեն, ասելով. «Լա՜ւ, ասենք թէ որդիդ այստեղ չի, դու խօ իմ ձեռքի՛ս ես»։ Դեռ այդ ոչինչ. կարծես եղածը քիչ էր. խեղճը ինչ ունէր չունէր՝ ձեռքից խլեցին, և նա դռնից դուռ ընկած, կոյր աղքատի նման մի փայտ ձեռքին, ողորմութիւն էր հաւաքում Աստուած սիրողներից։ Տեղակալի ձեռքից փախած ու թաք կացած որդին զարհուրանքով լսեց այդ տխուր համբաւը. այդ օրւանից Առնոլդը վճռեց, որ ինչ էլ լինի, հօր վրէժն անպատճառ հանի։

—Տեսէք, հիմիկւանից ձեզ ասում եմ, ասաց նա Շտաուֆախերին ու Տելլի աներ Վալտեր Ֆիւրստին. եթէ դուք ձեր տների ու հօտերի պատճառով վախենաք ու տեղակալի առջև վիզ ծռէք, այն ժամանակ ես իսկոյն կը

Հ. Ս. Ս. Ս. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI. 1922
Инвент. Номер
1002
65.59

գնամ սարերը, կը հաւաքեմ բոլոր հովիւներին ու նրանց կը պատմեմ այս բոլոր չարագործութիւնները։ Մի՞թէ երեխայութիւնից մեզ զուր տեղն են նեռաձգութիւն սովորեցրել. մի՞թէ կայսին գործածելն իզուր ենք սովորել, ասում էր երիտասարդ Առնոլդը, աշխատելով համոզել ծերերին։ —Էլ ի՞նչ մարդ ենք մենք. անասունը որ անասուն է, Աստուած նրան էլ պաշտպանելու գործիք է տուել։ Վատը հէնց մենք մարդիկս ենք, որ սպասում ենք մինչև որ ուրիշները գալիս են ու մեր աչքերը հանում։

Քաջասիրտ երիտասարդի խօսքերը ծերերին սրտաթունդ արին. նրանք իսկոյն վճռեցին, առաջ մի գնան ու խորհուրդ հարցնեն այն հողատէր բարոններից, որոնք շրջապատակիների հետ միշտ լաւ էին վարւում և հարկաւոր եղած ժամանակ միշտ օգնութիւն էին հասցնում, իսկ յետոյ իմաց տան երեք կանտոնի բնակիչներին, որ ամեն մի կանտոնից տասն ընտրուած մարդ գիշերը հաւաքւեն սարերումը մի տեղ, ու խորհուրդ անեն՝ տեսնեն ինչ են անում, ինչ չեն անում։ Մինչդեռ Շտաուֆախերն ու Վալտեր Ֆիւրստը Շուից և Ուրի կանտոններումն էին հայրենիքի համար ցաւողներին մէկ մէկ հաւաքում, Առնոլդ Մելխթալն էլ Ուտերվալդենումն էր բանի կացել։ Նա բարձրանում էր

սարերն ու այնպիսի դիք տեղերով էր գնում, որ կարծես թէ կեանքից ձեռք էր վերցրել. ճանապարհին ոչ մարդու էր պատահում, ոչ կացարանի. ծարաւելիս՝ սառցահալի ջրերից էր խմում:

Վերջապէս հասաւ նա Ալպեան հովիւների աղքատ խրճիթներին: Այս տեղերում արդէն լսել էին տեղակալի արարքը, և ամէն տեղ, ուր Միլխթալը պատմում էր իր անբաղդ հօր գլխին եկածը, նրան շատ սիրով և ուրախութեամբ էին ընդունում: Անկեղծ սրտով նրանք բարի գալուստ էին ասում նրան, և իբրև պատասխան աւստրիացիների տուած նեղութիւններին, նրանք վեր էին բերում պատերից կախ արած ժանգոտած սրերը: Շուեյցարիայի ամէն մի անկիւնում, երբ Առնոլդը տալիս էր Շտաուֆֆախերի ու Վալտեր Ֆիւրստի պէս պատուաւոր մարդկանց անունները, իսկոյն ամէն լսողի աչքերից քաջութեան կրակ էր թափւում. ամենքն էլ երդւում էին, որ ամէն բան կ՚անեն, ինչ որ նրանց ասեն, ինչ որ հրամայեն:

—Հայրենիքի համար ամէն ինչ կը զոհենք, թէկուզ մեր կեանքը, ասում էին նրանք:

Առնոլդն այդպէս մի տնից միւս տունը մտնելով, տեսաւ ու խօսեց իր կանտոնի բոլոր գիւղացիների հետ և վերջապէս իր հայրենի

ձորը հասաւ: Այստեղն էր նրա խեղճ հայրը. կոյր ու աղքատութեան մէջ՝ պառկած էր նա յարդի վրայ, որ բերել ու փռել էին նրա տակը նրան խղճացողները: Առնոլդը տեսաւ իր խեղճ հօրը, բայց լայ չեղաւ. նա իր դարդը ցոյց չէր տալիս. իր ցաւը նա թաքցրել էր սրտի խորքումը: Նրա միտքն այն էր միայն՝ թէ ինչպէս անի, որ կարողանայ հայրենիքն օտարների ձեռքից ազատել:

Էլ տեղ չկար,որ նա եղած չլինէր. էլ սարերի կիրճեր, էլ խոր ու մութ ձորեր չթողեց, ամէն տեղ մտաւ ու ամէն տեղ էլ ժողովրդին ապստամբութեան յորդորեց: Դեռ այդ ոչինչ. նա վարդապետի շոր հագած՝ ներս մտաւ աւստրիացիների երկու ամուր բերդերը ու ինքն իր աչքովը տեսաւ ու իմացաւ նրանց զօրութիւնը:

Ահա այսպէս, իր կեանքը միշտ վտանգի ենթարկելով, այս երիտասարդը մի երկու շաբաթում ամէն ինչ կարողացաւ պատրաստել մինչև այն որոշած օրը, երբ երեք կանտոնների ընտրուածները ամենն էլ մի տեղ պէտք է հաւաքուէին, վերջին անգամ ընդհանուր խորհուրդ անելու համար: Վերջապէս այդ օրն էլ հասաւ:

Լուռ ու հանդարտ գիշեր է: Անտառապատ բարձր սարերը, ունքները կախ գցած,

նայում են դէպի Ռիւալիի ծորը։ Հեռուից երևում է Ֆիրվալդշտէտեան լիճը. այնտեղ միանում են իրար երեք կանտոնների սահմանները։ Լուսնկայ գիշեր է. լուսնի պայծառ լոյսի առաջ սառոյցները պսպղում են հազար ու մի փայլովտարին տասներկու ամիս ձիւնով ծածկւած սարերի ահագին շղթաները նոյնպէս պայծառ փայլում են։

Ահա այն սարի նեղ ու կեռումեռ կածաններովը դէպի ցած են գալիս մի տասը հոգի հասարակ գիւղացիներ։ Սրանք Ունտերվալդէն կանտոնի ընտրւած մարդիկն են։ Ամենից առաջ գնում է Առնոլդ Միլխթալը։ Այս խեղճ հովիւները, տունն ու տեղը թողած, ով գիտէ ինչ հեռու տեղերից վեր են կացել ու եկել, որ խորհուրդ անեն ու իրանց գլխի ճարը տեսնեն։ Դրանցից երկուսն իրար հետ չունեն, մէկմէկու հետ թշնամի են և այս քանի տարի է, որ մի կտոր անպէտք հողի համար իրար միսն են ուտում. բայց ինչ կ'ասես որ հիմա դրանք ամեն ինչ մոռացել են ու իրանց թշնամութիւնը մի կողմը դրած, իրար ձեռքից բռնած, գնում են ներքև։

Ամենից շուտ տեղ հասան Ունտերվալդէն կանտոնի մարդիկը. նրանք խկոյն ձորի մէջ կրակ վառեցին ու կրակի չորս կողմը նստոտած,

ճնացածներին սպասեցին։ Բայց այդ էլ երկար չքաշեց. միւս կանտոնցիներն էլ շուտ եկան։

Լճի երեսին մի մակոյկ երևաց. նրա մէջ նստած էր Շտաուֆախերը՝ Շուիցի տասն ընտրւած մարդկանց հետ։ Դեռ ափը չհասած, նրանք դոռալով բարևում են Ունտերվալդենից եկածներին։ Ահա նրանք էլ տեղ հասան և դուրս եկան մակոյկից. ամենքն էլ զինւած էին աղեղներով, նետերով ու հին, իրանց պապերից ճնացած սրերով։ Նրանք եղբայրաբար, ուրախ ուրախ բարևում են ու ձեռք տալիս իրանցից շուտ եկած ունտերվալդցիներին. թէև իրար առաջին անգամն էին տեսնում, բայց այնպէս սիրով էին իրար հետ խօսում, որ տեսնողը հէնց կ'իմանար թէ սրանք վաղուց են մէկմէկու ճանաչում։ Ամենքն էլ իրար հետ մի սիրով ու մի ցանկութեամբ էին կապւած. բոլորն էլ մի սիրով էին սիրում իրանց հայրենի սարերը. ամենքն էլ մի՛ ցանկութիւն ունէին՝ պաշտպանել իրանց կանանցն ու երեխաներին։

Ահա ճնացածներն էլ եկան. բարձրում՝ ժայռերի վրայ երևացին նրանք։ Զինւած, ջահեր ձեռներին՝ լուսաւորելով իրանց խոր ու մութ տեղերով ընկած ճամբան, գալիս են ներքև։ Սրանք էլ Ուրի կանտոնի ընտրւածներն են։ Նրանց առաջնորդում է Ցելլի Ցերունի անը՝

Վալտեր Ֆիւրստը։ Դրանց հետ գալիս է նաև զառամած, ուժից ընկած քահանան, գաւազանը գետնին դէմ տալով, տմբտմբալով. երևում է որ շատ յոգնած է, ոտները զօռով է փոխում։ Բայց չնայած դիշեր ժամանակին ու ճանապարհի դժուարութեանը, նա՝ ինչպէս հաւատարիմ հովիւ, չի ուզում իր հօտն անտէր թողնի։

Մենակ քաջ որսորդ Վիլհելմ Տելլն է պակաս. Շտաուֆախերը նրան էլ էր կանչել այստեղ՝ Ռիւտլի. բայց որսորդը նրա ձեռքը սեղմելով՝ ասել էր.

«Ինձ ասելն ի՞նչ հարկաւոր է. մի՞թէ Տելլը վտանգի ժամանակ մենակ կը թողնի իր ընկերներին, այն Տելլը, որ զառանն էլ ազատում է անդունդը գլորուելուց։ Ինձ խորհրդի մի՛ կանչէք. ախր դարտակ խօսքերով ես ի՞նչ օգնութիւն պիտի հասցնեմ ձեզ։ Չէ՛, խորհուրդն ու խօսքերը իմ բանս չեն. իմն այ սա է, —այս ասելով, նա մեկնել էր իր ուժեղ կռները։ Երբ բաղուկներս ձեզ հարկաւոր դան, այն ժամանակ բաւական է որ մի խօսք ասէք. մեկ էլ կը տեսնէք, որ Տելլը կողքներիդ կանգնած է։»

Տելլը սուտ ասել չգիտէ։ Այս սարերումն ամենքն էլ նրան լաւ են ճանաչում. բոլորն էլ գիտեն որ այս քիչ խօսող, միշտ ունքերը կիտած մարդն ի՛նչ մարդ է. հենց այդ էր պատճառը, որ ոչ ոք չէր զարմանում թէ ինչու նա այստեղ՝ Ռիւտլիի ձորումը չէ։

Էլ մարդ չունեն սպասելու. Վալտեր Ֆիւրստն էր, նա էլ եկաւ։ Եւ ահա երեք կանտոնի՝ Ուրիի, Շուիցի և Ունտերվալդենի ընտրուածները, երեսուներեք հոգի, վեր կացան ու շրջանաձև կանգնեցին։ Ծերունի տէրտէրը հրամայեց, որ ամենքն էլ դեռին խրեն իրանց սրերը և մի «ամման», կամ խորհրդի կարգադրիչ ջոկեն իրանց միջից։ Առաջ ընտրեցին Շտաուֆախերին , բայց նա չկամեցաւ որ ինքը լինի դլխաւորը և մատնացոյց արաց իննսուն տարեկան Ծերունի Ուեդինդին, որովհետև նա էր իրանց միջից ամենից տարիքաւորը։

Եւ ահա այս մութ դիշերին, բաց երկնակամարի տակ, Ռիւտլիի ձորի մէջ սկսուեց խորհուրդը։ Այս այն խորհուրդն է, որի վրայ շուեյցարացիք երգեր են կապել և այդ երգերը մինչև օրս էլ երգում են։

Շտաուֆախերը մի քանի խօսքով պատմեց, թէ ինչպէս մի ժամանակ իրանց պապերն եկել են այս երկիրը.

—Նրանք իրանց ձեռքով մշակել են այս աղքատ հողերը։ Նրանք իրար հետ մի արիւնով էին կապուած, մի հայրենիք էր նրանց սնունդ

ու կերակուր աւել, մեծացրել: Այն ինչ ուրիշ աղգեր՝ յաղթելուն պէս, հնազանդւում ու ընդունում էին յաղթողների իշխանութիւնը, շնեյցարացիք պինդ էին պահում իրանց անկախութիւնը. նրանք միայն իրանց յօժար կամքովն են մտել գերմանացոց թագաւորի ձեռքի տակ: Մի անգամ չէ, երկու անգամ չէ, որ նրանք գերմանացիների համար արիւն են թափել: Բայց տեսէք թէ փոխարէնն ինչպէս են հատուցանում նրանք. էլ խաշների հօտեր չի մնացել, որ տարած չլինեն, էլ անտէր ու անպաշտպան ծերեր, էլ կանայք, էլ երեխաներ չմնացին, որ չարչարանքի ու տանջանքի չենթարկէին: Երբ մարդ տեսնում է, որ աշխարքումս էլ արդարութիւն չի մնացել, ասում էր Շտաուֆախերը, երբ դանակը ոսկորին է հասնում, երբ համբերութիւն ասածդ կեանք չի այլևս, այլ՝ մահ, այն ժամանակ մարդ պիտի Աստծուն աղօթք անի ու թողութիւն խնդրի և ողորմած Աստուած թողութիւն կը շնորհի այն արիւնի համար, որը նա թափում է իր աղքատիկ ունեցած չունեցածի, քաղցր ու սիրելի հայրենիքի, կնոջ ու զաւակի պաշտպանութեան համար:

Շտաուֆախերի խօսքերը ամենքի վրայ մեծ ազդեցութիւն արին: Բոլորն էլ այնպէս

վառեցին, որ ամեն մարդ ձեռքը տարաւ դէպի իր սուրը. ամեն մէկը պատրաստ էր հենց այն րոպէին գնալ յարձակւել թշնամու վրայ և հանել սրտի վրէժը: Բայց տէրհայրը նրանց հանդստացրեց՝ ասելով.

—Որդիքս, աւելի լաւ կը լինի որ գործը խաղաղութեամբ վերջացնենք, եթէ կարելի է: Էհ, դեռ ով է իմանում, կարելի է Ալբրեխտ թագաւորն իսկի չգիտէ էլ, որ մեզ այսքան նեղացնում են: Առաջ եկէք մի դանգատ ուղարկենք նրան. տեսնենք, եթէ մեր դարդերին մի դարման չեղաւ, այն ժամանակ ինքներս մեր գլխի ճարը կը տեսնենք. ինքներս սաղ լինենք ու մեր զէնքերը:

Բայց Շուից կանտոնի գիւղացիներից մէկը, որն արդէն մի անգամ իր կանտոնի կողմից գնացել էր թագաւորի մօտ, ասաց՝ որ իրան չթողին էլ թէ Ալբրեխտի երեսը տեսնի, և հենց ինքը՝ թագաւորն էր հրամայել, թէ «այն գիւղացուն ասէք, որ ես շնեյցարացիներին երբ և իցէ մի ուրիշ անգամ կը մտաբերեմ»:

—Եւ, վերջապէս, Ալբրեխտից ի՞նչ լաւ բան պիտի սպասենք, աւելացրեց գիւղացին. մի՞թէ դա այն Ալբրեխտը չէ, որ անիրաւութեամբ ու առանց մի պատճառի անդադար կռիւներ է զցում իր հարևանների հետ, որ ինչ է,

ուրիշների հողերն ու հարստութիւնները իր ձեռքը դցի։

Դրանից յետոյ առաջ եկաւ Ուրի կանտոնցի Ծերունի Վալտեր Ֆիւրստը։

—Եղբայրներս ու բարեկամներս, սկսեց նա, իմացած լինէք որ մենք նոր նոր շահերի ետևից չենք ընկած. մենք ուզում ենք միայն ազատուել մեր վզին դրած ծանր լծից, որի երեսը մեր պապերը չեն էլ տեսել։ Ուզում ենք որ մեզ հանգիստ թողնեն, չնեղացնեն, չվիրաւորեն ոչ մեր հողերին, ոչ էլ մեր կանանցն ու երեխաներին։ Ուզում ենք որ մեզ չվիրաւորեն, մեզ համար բանդեր չշինեն. մեզ թողնեն որ ապրենք այնպէս, ինչպէս որ ապրել ենք մինչև օրս՝ հարիւրաւոր տարիներ հանգիստ, մեր հալալ աշխատանքով։ Էլի առաջայ պէս, ինչպէս հարկն է, պատիւ կը տանք Աղբրեխտին՝ իբրև թագաւոր մարդու. եղբայր, ով որ հողի հարկ է տալիս, թող սրանից յետոյ էլ տայ աղնիւ կերպով, ինչպէս որ առաջ էր տալիս։ Կ'անենք այն՝ ինչ որ հարկաւոր է, ինչ որ մեր պարտքն է. դրանից աւելին պէտք չի։ Մենք ուզում ենք միայն տեղակալներին վռնդել ու նրանց ամբոցները քարուքանդ անել, և թէ հարկաւոր լինի՝ այս բանը կ'անենք առանց կռուի, առանց արիւնի, հարկաւոր չէ իզուր արիւն թափելը։

Թող մեր թագաւորը տեսնի և իմանայ, որ այդ բանում մենք մեղ չունենք. մենք զէնքի ենք դիմում, որովհետև մինչև այդ տեղն են հասցրել մեզ։

Այդպէս, շէյցարացիք իրանց մէջ շատ երկար խօսեցին ու վճռեցին, որ սպասեն մինչև Ջրօրհնէք. ասում էին, որ այն ժամանակ տեղակալի բերդը մտնելը հեշտ կը լինի, որովհետև կը կարծեն թէ մենք էլ ենք ընծայ բերողներից. մեր դժւարը բերդ մտնելն է. մտանք թէ չէ, իմացէք որ մերն է։ Սրա լաւ մէկ էլ այն է, որ մինչև Ջրօրհնէք շատ ժամանակ ունենք, այնպէս որ օր առաջ կարող ենք զէնքերի պատրաստութիւն տեսնել, որ բերդը մտնելուց յետոյ պաշարի պակասութիւն չլինի։ Բերդը մտնելուն պէս՝ իսկոյն կրակ կը վառեն սարերումը. այդ կրակը կը լինի մեր ընդհանուր ապստամբութեան նշանը։ Ո՛վ գիտէ, կարելի է, որ երբ աւստրիացիք տեսնեն թէ ամբողջ երկիրը վեր է կացել իրանց դէմ, հէնց իրանք ուզեն բանը խաղաղութեամբ վերջացնել։

Ահա թէ ինչ էին մտածում շէյցարացիք։

Մինչև որ սրանք այսպէս խորհուրդ էին անում, արևը քիչ քիչ ընկաւ սարերի գլուխներին։ Ամենքն էլ ակամայ դդակները վեր առին

և սկսեցին աղօթք անել իրանց գործի յաջողութեան համար։ Քահանան բոլորին օրհնեց ու ասաց.

—Սիրելի որդիներս, հէնց հիմա, այս սուրբ լուսաբացին, երբ մեր ձորերում ամենքն էս քնած են դեռ, եկէք երդումով հաստատենք մեր խօսքն ու դաշինքը. այս րոպէից եղբայրանանք ու երդւենք, որ մեզանից ոչ ոք իր ընկերին մենակ չի թողնի՝ ոչ դժւար ընկած տեղը, ոչ փորձանքի և ոչ էլ դառնութեան ժամանակ։ Աղա՞ տ լինենք, ինչպէս որ աղատ են եղել մեր պապերը։ Լաւ է մեռնենք, քան թէ մեր տունն ու տեղը, մեր ընտանիքները գերութեան մէջ թողնենք։ Ցոյսներս դնենք Աստծու վրայ ու մարդկային զօրութիւնից չվախենանք. այն ժամանակ թող ինչ որ ուզում է՝ լինի։

Իրանց հին սովորութեան համեմատ, ամենքը միասին խորհրդաւոր կերպով երեք մատները դէպի երկինք բարձրացրած՝ կրկնեցին երդումի խօսքերն ու եղբայրաբար մէկմէկու համբուրեցին։ Ամենքն էլ մի տեսակ փոխւեցին, կամ թէ, ինչպէս ասում են՝ սրտաշարժւեցին. ինչպէս երևում էր, ով ինչ որ այստեղ տեսել ու լսել էր, զուր չէր անցել նրա համար։ Նրանք իրար հաստատ խօսք տւին, որ լռութեամբ

ընկերներ հաւաքեն ընդհանուր գործի համար։ Դրանից յետոյ շւեյցարացիք կամաց կամաց ցրիւ եկան. ամեն մարդ գնաց իր տուն։

Արևը իր պայծառ լոյսն արդէն տարածել էր ծիւնապատ սարերի գագաթների ու սառոյցների վրայ. նա լուսաւորել էր նոյնպէս այն մարդկանց ճանապարհները, որոնք մի քիչ առաջ դաշն էին կապել, որ միասին ապրեն կամ միասին մեռնեն հայրենիքի համար։

Վիլհելմ Տելլի կին Հեդւիգն իմացաւ, որ Ռիւտլիում խորհուրդ կայ, վախեցաւ, չլինի թէ տեղակալի դէմ դաւադրութիւն կազմեն և իր մարդուն էլ խառնեն այդ բանում։ Հեդւիգը թէ առողջութեամբ և թէ սրտով մի թոյլ կին էր. ամբողջապէս իր ընտանիքի և տան գործերովն էր լինում զբաղւած։ Երբ Տելլը գնում էր որսի, այդ խեղճ կնիկը վախը սրտից չէր հանում ու մինչև նրա տուն դալն՝ սպասելուց աչքը ջուր էր կտրում. իսկ երբ մարդը տուն էր դալիս ու պատմում, թէ ինչ տեղեր է եղել, Հեդւիգը սարսափով լսում էր նրա արած անվախ քաջագործութիւնները։ Ամեն անգամ, երբ Տելլը տնից դուրս էր դալիս, Հեդւիգին այնպէս էր թւում, թէ նա ճանապարհը կորցրել է սառոյցների մէջ, կամ ոտն է դուրս պրծնում ու բարձր ժայռերի գլխից անդունդն

է գլորում, իսկ նրա եռևից ահագին քարեր են թափւում ու նրան իրանց տակովն անում։

Մօր սիրտը նեղանում էր, երբ տեսնում էր որ Տելլն իր փոքրիկ երեխաներին նետ գցել էր սովրեցնում. այդ բոպէներին խեղճի լեղին վախից ջուր էր կարում, մանաւանդ երբ մտածում էր, որ մի օր էլ նրանք իրանց հօր նման, կեանքից ձեռք վերցրած՝ ուրախ ուրախ ընկնելու են այդ վտանգաւոր տեղերը։

Ռիւտլիի խորհուրդը Հեդւիգն իր համար դարդ էր շինել. ինչ անում էր չէր անում՝ այդ բանը չէր կարողանում մոռանալ. անդադար գնում էր գալիս և Տելլին հարցուփորձ անում նրանց դաւադրութեան մասին. աղաչում էր, պաղատում, որ նա այդ բանին չխառնւի, ասելով՝ որ նրա կեանքը հարկաւոր է կնոջն ու երեխաներին, որ իրանք խեղճ են, որ առանց նրան իրանք անտէր ու անօգնական կը մնան. բայց ո՞ւմ էր ասում, ո՞վ էր լսողը։

—Չէ, ես չեմ կարող ընկերներիցս բաժանուել, չէ. ո՛չ կարող եմ ո՛չ էլ ուզում եմ, ասում էր Տելլը։

Հէնց այս խստակցութիւնից անմիջապէս յետոյ էր, որ Տելլը յանկարծ վեր կացաւ ու գնաց Ալտդորֆ, Հեդւիգի հօր՝ Վալտեր Ֆիւրստին տեսնելու։ Հեդւիգը գիտէր, որ տեղակալ

Հեսլերը հիմա այնտեղն է. այն էլ գիտէր, որ նա չի սիրում իր մարդուն. ուստի սկսեց նրան խնդրել որ այսօր Ալտդորֆ չգնայ։

Իսկ Տելլը ոչ միայն լսեց կնոջ խօսքը, այլև իր պստիկ որդուն՝ Վալտերին էլ հետը տարաւ, ասելով թէ պապի մօտն է տանում։ Հեդւիգը վախից սրտաճաք եղած՝ մնաց տանը իր ամենափոքր երեխայի հետ. խեղճ մայրն աչքերը գցել էր իր մարդու և երեխայի քամակին, որոնք քանի գնում՝ այնքան հեռանում էին և վերջապէս այլևս բոլորովին չերևացին։

Ալտդորֆի հրապարակում մի ծող էր երևում, Հեսլերի գլխարկը ծայրին։ Ձողի կողքին երկու զինւոր են կանգնած. նրանց հրամայւած է մտիկ տան, որ այդ տեղով եկող գնացողը գլուխ տայ այն գլխարկին։ Զինւորներն էլ մնացել են շւարած. զուր տեղը առաւօտից մինչև երեկոյ կանգնած սպասում են. ոչ ոք չի ուզում գլուխ տայ. ամենքն էլ գիտամբ ուրիշ ճանապարհով են գնում, որ ինչ է գլխարկի մօտով անց չկենան։

Բայց ահա երևաց Վիլհելմ Տելլը. նա հէնց այդ ճամբովն էր գալիս։ Նրա ղէնքը մի աղեղ է, որից նա երբէք չի բաժանւում. փոքրիկ Վալտերի ձեռքը բռնած՝ գալիս է ու պատմում նրան, թէ իրանց Շւեյցարիայից դէնը՝ սարերի

քամակին ուրիշ շատ երկրներ էլ կան։ Այդպէս հայը ու որդի զրոյց անելով, իրանց համար միամիտ գալիս մօտենում են գլխարկին. բայց դա նրանց աչքովը չի ընկնում։ Ուզում են մօտովն անց կենան, առանց իմանալու թէ բանն ինչումն է. մէկ էլ տեսնում են, որ մի զինուոր հրացանի սուինով կտրում է նրանց ճամբան ու հրամայում, որ Տելլը գլուխ ապ այն գդակին։ Տելլը չուզեց զինուորի ասածը կատարի. բայց զինուորն ասաց որ այդ անհնազանդութեան համար նրան բանդը կը դցեն։ Բանդի անունը լսելուն պէս, փոքրիկ Վալտերը լաց եղաւ և սկսեց օգնութիւն կանչել։ Երեխայի ձայնից հրապարակը հաւաքուեցին մի քանի գիւղացիներ, որոնք այդ ժամանակ անց էին կենում մօտիկ ճամբով։ Վալտեր Ֆիւրստն էլ նրանց հետն էր։ Խեղճ երեխան պապին տեսաւ թէ չէ, խսկոյն աչքերն արտասուքով լցուած՝ վազեց նրա մօտ, խնդրելով որ չթողնի իր հայրիկին բանդը դցեն։ Ֆիւրստը միայն հիմա հասկացաւ թէ բանն ինչումն է։ Նա ուզեց իր փեսային երաշխաւոր լինի, բայց զինուորներն իրանց ասածի էին, իրանց էշն էին քշում։ Նրանք սկսեցին Տելլին կապոտել, որ տանեն բանդը դցեն։

Բայց քանի գնում էր, այնքան աւելի էր լցւում հրապարակը աղաղակի վրայ հաւաքուած

ժողովուրդով, որովհետև այդ լուրն ամեն տեղ հասել էր։ Այդ անասելի ու չտեսնուած բռնութիւնը վրդովեց գիւղացիներին. նրանք վճռեցին Տելլին ձեռքից չթողնել և քիչ էր մնացել, որ թափուէին զինուորների վրայ։

Բայց հէնց այդ բոպէին որսկանների փողերի ձայներ եկան. «տեղակալը գալի՞ս է. տեղակա՞լը», լսելի եղաւ ժողովրդեան միջից։ Զինուորները հէնց որ այդ լսեցին, սկսեցին առաջանից աւելի գորգոռալ, «դաւաճանութի՞ւն է սա. ապստամբութի՞ւն է սա, ընդդիմութիւն է։» Հէնց այս խօսքումն էին, որ անտառի կողմից երևաց հեսլերը, ձի նստած. նա գնացել էր բաղէով թռչուն որսալու և հիմա իր զինուորած մարդկանցով վերադառնում էր։

—Էյ, ճամբայ տուէք, յետ քաշուեցէք, ճամբից հեռացէք, դէ՛, շո՛ւտ։ Այս ասելով՝ զինուորներին հարցրեց թէ ինչ կայ որ այսպէս հաւաքուել են։

Զինուորներից մէկը մատով ցոյց տուեց Տելլին ու ասաց.

—Ա՜յ, տեսնում ես, մեղաւորն այս բան ու գործը կտրուած յիմարն է. սա է զալմաղալի պատճառը։ Չի ուզում թէ գդակին գլուխ ապ. դրա համար էլ ուզում եմ տանեմ բանդը դցեմ։ Բայց ժողովուրդը չի թողնում։

Երեսը մռայլած՝ Հեսլերը լսեց այս խօսքերն ու մի քիչ լուռ կենալուց յետոյ դարձաւ դէպի Տելլը։

—Մի՞թէ դու այնքան քիչ քիչ ես յարգում Թագաւորին և ինձ՝ նրա փոխանորդին, որ չես կամեցել պատիւ տաս այս գլխարկին. դա հէնց նրա համար է կախ տուած այստեղ, որ իմանան թէ ով է հնազանդ կամ ով չէ հնազանդ։ Առաջին մարդը դու ես, որ իմ հրամանը չես կատարում։

—Այս անգամ բաշխի՛ր ինձ, չիմանալով եմ մեղք արել։ Քո հրամանը կատարելը, որ ասես, մտքովս էլ չի անց կացել։

Հեսլերը մի քիչ լռեց ու յետոյ ասաց.

—Տելլ, ճշմարի՞տ է որ ասում են, թէ նեռ գցելում լաւ վարպետ ես. ասում են այդ բանում քեզ հաւասար մարդ չկայ և որ դու այս կողմերում առաջինն ես։

Մինչև հայրը բերանը բաց կ՚անէր, որդին նրա տեղը պատասխանեց.

—Այո՛, այո, տէր, ճշմարիտ է. իմ հայրը հարիւր քայլի վրայ ինչ խնձոր ասես, նեռով կը կարի, վեր կը գցի։

—Զլինի թէ սա քո որդին է, հարցրեց Տելլին Հեսլերը։

—Այո, տէր։

—Էլ ունես, թէ միայն սա է։

—Ո՛չ, տէր, երկուսն են։

—Երկուսից որի՞ն ես շատ սիրում։

—Տէր, երկուսին էլ մէկ եմ սիրում։

—Դէ որ այդպէս է, լա՛ւ։ Եթէ զորդ են ասում որ դու նեռով խնձորը ծառից կտրում՝ վեր ես գցում, դէ՞, շնորհդ մէկ ցոյց տուր մեզ. քո որդու գլխի վրայից խնձորը թռցրու նեռովդ։ Բայց տես, հիմիկւանից ասում եմ հա՞, լաւ նշան առ. եթէ խնձորը մի անգամից չթռցնես, իմացած լինես որ գլուխդ թռնցել կը տամ։

Ժողովուրդն ահուդողի մէջ ընկաւ այս սարսափելի հրամանը լսելով ու ոչ մի ծպտուն չհանեց։

Խեղճ հայրը զուր տեղն աղաչում ու պաղատում էր Հեսլերին.

—Աղաթի՛ր ինձ այդ բանից, Աստուածդ սիրես, թող որդեսպան չդառնամ. մի՞թէ ես իմ ձեռքովն իմ հարազատ որդու արիւնը պիտի թափեմ, ասում էր Տելլը։

Եւ իսկ որ՝ բաւական էր ձեռքը մի քիչ դողդողար, որդուն սպանած պրծած կը լինէր։

Բայց Հեսլերը նրան ականջ չէր դնում. նա անողորմ էր, սիրտը քար էր կտրել։

—Ասում են որ դու անսովոր բաներ ես սիրում, պատասխանեց նա. ասում են որ դու

մի ուրիշ տեսակ մարդ ես. քո ապրելն ու մտածելն էլ մի ուրիշ տեսակ է. հէնց դրա համար էլ ես մի անսովոր քաջագործութիւն ջոկեցի քեզ համար։

Ամենքն էլ մնացել էին զարմացած ու չգիտէին թէ տեղակալը կատակ է անում, թէ իսկն ասում։ Բայց տեղակալը մօտակայ ծառից մի խնձոր կտրեց ու դառնալով հրապարակում հաւաքուած բազմութեանը՝ գոռաց.

—Դէ, այ ժողովուրդ, դէնը կացէք, տեղ տուէք։ Ուրթսուն քայլ չափեցէք։ Տես, հա՛, ծուռ չխփես, ասաց նա Տելլին դառնալով. իմ ձեռքիս ես դու. եթէ ուզենամ, կարող եմ քեզ սպանել տալ. բայց քո վիճակը քեզ եմ յանձնում. քո ձեռքին է ապրելդ էլ, մեռնելդ էլ. թէ կարողացար սիրտդ ու ձեռներդ պինդ պահես, այն ժամանակ՝ խօսք չկայ, կ'ասեմ շատ լաւ նետ գցող ես։

Ոչ Հեսլերի թիկնապահների խնդիրը՝ որ նա իր անողորմ հրամանը փոխի, ոչ Վալտեր Ֆիւրստի նրա առջև չոքելն ու աղաչելը, ոչինչ չօգնեց, բոլորն էլ զուր անցաւ։ Հեսլերը կարծես խլացել էր, ոչ ոքի չէր լսում։ Փոքրիկ Վալտերը մօտեցաւ գետին չոքած պապին ու ասաց.

—Վեր կաց, վեր, պապի. ի՞նչ ես չոքել այդ քարասիրտ մարդու առաջ։ Դարդ մի՛ անիլ.

դու ասա տեսնեմ ես որտեղ կանգնեմ։ Գիտես թէ ես վախենում եմ. չեմ վախենում։ Հայրիկիս նետն ինձ չի դիպչիլ. նա այնպէս նետ գցող է, որ թռչնին թռչելու ժամանակը վեր է գցում։

Հեսլերը հրամայեց որ Վալտերին կապեն ծառին։ Բայց երեխան իր մօտ եկած գինուորին տղամարդու պէս դէնը հրեց ու չթողեց որ իրան կապի, ասելով.

—Ի՞նչ ես անում, ուզում ես կապես. պէտք չի, չեմ ուզում, առանց այդ էլ ես ոչ շունչ կը քաշեմ, ոչ էլ տեղիցս կը շարժուեմ։ Իսկ եթէ կապէք, ես հա՛մ կը գոռամ, համ ոտներս գետին կը խփեմ, մի խօսքով, տեղս հանգիստ չեմ մնայ։

Ճարները կտրած՝ ուզեցին գոնէ աչքերը կապեն. բայց նա այդ էլ չթողեց։

—Ի՞նչ է, հէնց իմանում էք, թէ իմ հայրիկի նետիցը վախենում եմ, ասաց Վալտերը։ Մի՛ամիտ կացէք, աչքս էլ չեմ թարթիլ։ Հայրիկ, սա չի հաւատում. մի ցոյց տուր էֆ, ցոյց տուր որ լաւ նետ գցող ես։ Այս անիրաւն ուզում է մեր գլխին փորձանք բերի։ Հէնց սրա ջիգրու՝ նետդ գցիր ու այս խնձորը մի լա՛ւ թռցրու։

Այս խօսքերն ասելով, նա արձակ համարձակ գնաց դէպի ծառը։ Խնձորը դրին նրա

գլխին: Բազմութիւնը լուռ սարսափով նայում էր այդ բանին:

—Հը՞, ի՞նչպէս ես շարժւում. կարծես աղա լինի գլխիս, ասաց Հեսլերը Տելլին՝ մի քիչ սպասելուց յետոյ: Ամեն ժամանակ զինուած ես. ինքդ ճորտ ես՝ բայց նետը միշտ ձեռքդ է, մի րոպէ անգամ ձեռքիցդ ցած չես դցում: Ա՜յ, հիմա քեզ լաւ նշան. դէ՞, եթէ լաւ տղայ ես, եթէ լաւ խփող ես, մի խփիր՝ տեսնեմ ինչպէս ես խփում:

Տելլ աղեղը լարեց ու նետը դրեց վրան: Բայց խսկոյն խեղճի աչքերը մթնեցին. գլուխը շուռ տուեց ու աղեղը ձեռքից վեր ընկաւ: Կանայքը վայ կանչեցին:

—Տէր, ասաց Տելլը՝ առաջին անգամ Հեսլերի առջև բերան բաց անելով. տէր, ինձ սպանիր, ինչ ուզում ես՝ արա, ինչ պատիժ ուզում ես՝ տուր, միայն ինձ ազատիր այս կրակից. ինձ մի՛ ստիպի որ այս նշանին խփեմ, ի սէր Աստծու:

—Չէ, ի՞նչ եմ անում քո մեռնելը. իմ ինչի՞ս է հարկաւոր, ասում էր Հեսլերը. ես հէնց այնպէս, ուզում եմ տեսնեմ, թէ ինչպէս նետ ղցող ես: Ի՞նչ կայ, խօ կարողացար այն փոթորիկովը Բաումգարտենին լճի միւս կողմն անց կացնել. իմ ձեռքիցս նրան ազատելը հեշտ էր, հա՞:

Դէ՞ էլ ի՞նչ կայ. դու որ այդպէս ամենքի համար փրկիչ ես եղել, դէ՞ թէ լաւ տղայ ես, մէկ ինքդ քեզ փրկիր, տեսնեմ ինչպէս ես փրկում:

Տելլը նետը գետնից վերցրեց. նրա ձեռն ու ոտքը դողում էին. աղերսող հայեացքով, յոյսը կտրած, նա մէկ տեղակալի երեսին էր մտիկ տալիս, մէկ երկնքին: Իսկ չորս կողմի բազմութիւնն առաջւայ պէս վախից լուռ ու մունջ նայում էր սրան...

Ցանկարծ Տելլը կապարճից մի նետ էլ հանեց, կոխեց կռնատակն ու գաղեց: Բայց այդ բանը Հեսլերի աչքումը ընկաւ:

—Հա՛յրիկ, ա՛ հայրիկ, կանչում էր երեխան ծառի տակից: Նշանիր ու խփիր, մի՛ վախենայ, ես չեմ վախենում:

Տելլը աղեղը լարեց:

Այդ ժամանակ Հեսլերի մարդկանցից մէկը էլ չկարողացաւ համբերել. սկսեց տեղակալին յանդիմանել, ասելով որ նա խղճմտանք չունի, քարասիրտ է. քիչ էր մնացել, որ նրա վրայ յարձակւի ու սրի բերանը տայ նրան: Բոլորն էլ իրանց ուշադրութիւնն այն երկուսի վրայ էին դարձրել և սպասում էին տեսնեն՝ սրա վերջն ի՞նչ կը լինի:

Իսկ աղեղը քանի գնում՝ այնքան աւելի էր լարւում... Եւ յանկարծ՝ ո՛վ էր ո՛վ չէր,

բազմութեան միջից մէկը կանչեց. «խնձորը վե՞ր ընկաւ, խնձորը վեր ընկաւ, Տելլը դպցրե՞լ է, խփել է խնձորին, խփե՞լ է»...

Երեխայի պապը՝ Ֆիւրստը, վախից և ուրախութիւնից քիչ մնաց, թէ կանգնած տեղը վեր ընկնի։

Պսակիկ Վալտերը վերցրեց գետին ընկած խնձորը և ուրախ ուրախ հօր մօտը վազեց։

—Հայրիկ, հայրիկ, ահա՛ խնձորը. տեսնո՞ւմ ես որ ես ասում էի. ախր ես գիտէի, որ դու ինձ չես խփիլ։

Տելլը որդուն գրկեց, իսկոյն չաքեց ու սկսեց աղօթել և փառք տալ Աստծու ամենակարող զօրութեանը։

Հեսլերը Տելլի ձեռքիցն առաւ խնձորը ու ինք իր աչքով տեսաւ, որ իսկ որ նետը ծակել էր ու անց կացել։ Ցեղոյ դառնալով որսորդին՝ հարցրեց.

—Իսկ այն միւս նետն ինչո՞ւ համար կոխեցիր կռնատակդ ու թաքցրիր։

Առաջին անդամից Տելլը չիմացաւ թէ ինչ ասի. բայց մի քիչ լռելուց յետոյ՝ ասաց.

—Իսկի, տէ՛ր, հէնց այնպէս. մեղանում սովորութիւն կայ։

—Այդ պատասխա՞ն է, որ դու ես տալիս։ Չէ՛, դու ինձ ճշմարիտն ասա. մի՛ վախենայ,

բաց պատասխանիր. ինչ ուզում է լինի, ես քեզ բաշխում եմ, ասաց Հեսլերը։

Տելլը նայեց տեղակալի երեսին ու շնչակտուր պատասխանեց նրան.

—Աստծուց թաքուն չէ, քեզանից ինչ թաքցնեմ, տէր. մտքումս դրել էի, որ եթէ պատահմամբ նետը որդուս դիպչէր, միւս նետովն էլ քեզ խփեմ սպանեմ։

Հեսլերը երկար լռութիւնից յետոյ ասաց.

—Դէ՛ հիմա ինչ էլ որ լինի, ես խօսք տուի որ կը բաշխեմ. կեանքդ քեզ եմ բաշխում. իմ խօսքս խօսք է, ասածս՝ ասած։ Բայց որովհետև հիմա իմացայ չար մտադրութիւններդ, դրա համար էլ ես քեզ մի այնպիսի ծակ կը կոխեմ, որ Աստծու արդար լոյսի երեսն իսկի չտեսնես։ Տղե՛րք, ձեզ եմ ասում, այս բոպէին սրա ձեռն ու ոտը մի լաւ կապոտեցէք։

Ասելն ու անելը մէկ եղաւ. զինուորներն իսկոյն վրայ թափուեցին, իրանց ձեռի հրամանը կատարեցին։ Բազմութիւնը Տելլի չորս կողմը կտրեց. ամենքն էլ սկսեցին նրան մնաս բարև ասել։ Քաջ որսորդը օրհնեց որդուն, ասելով.

—Ահա այնտեղ է քո հայրիկը, երկնքումը. նրան աղօթիր. դու միայն կենդանի լինես, իսկ ինձ Աստուած կ'օգնի։ Ինչ որ քեզ ասի, կ'երթաս մօրդ կ'ասես։

Այս ասելով, նա համբուրեց Վալտերին և բազմութեանը գլուխ տալով ու ճնաս բարև ասելով, հեսլերի ետևից ընկած՝ գնաց։ Նա շրջապատուած էր պահապաններով։ Տեղակալը վճռեց իր ասածը կատարել, այսինքն Տելլին մի այնպիսի տեղ դցել, որ Աստծու աչած լոյսն էլ չտեսնի։ Նաւակ դրած՝ Ֆիրվալդշտետեան լճի վրայով նրան տանում էր իր Կիւսնախտ կոչուած հեռու ամրոցը։ Տելլը կապած կապկապած՝ ընկած էր նաւակի յատակին և ինքն իր մտքում արդէն ճնաս բարև էր ասում կնոջն ու որդիներին։

Նաւակումը նստած էին՝ բացի Տելլից ու հեսլերից, սրա զինակիրն ու մի քանի թիավարներ։ Տելլի կապրաճն ու աղեղն էլ դցել էին ղեկի մօտ։

Ցանկարծ սարերից մի այնպիսի քամի վեր կացաւ, մի քամի՜, որ քիչ մնաց թէ թիավարների շունչը կտրի վախից. նրանցում էլ հալ չէր մնացել. ամենքն էլ կարծում էին որ պրծնում չկայ, կորան գնացին։ Հէնց այդ միջոցին նրանցից մէկը դարձաւ տեղակալին՝ ասաց.

—Տէր, էլ մեզ պրծնում չկայ. ամենքս էլ մի մաղից ենք կախ. ոչ ղեկավարը, ոչ էլ թիավարներս չենք իմանում, թէ ճամբան այս քարքարուտում որտեղով է գնում։ Բայց Տելլը

մեզ հետ է. նա հա՛մ ուժեղ է, համ ղեկավարել գիտէ։ Ուրեմն, տէր, ի՞նչ կը լինի, մէկ հրամայես նրան, որ մի քիչ մեզ համար ղեկավարութիւն անի։

Իսկոյն յետ արին Տելլի կապանքները։ հեսլերը նրան հրամայեց, որ ղեկի մօտ նստի, իսկ դրա փոխարէն խոստացաւ նրան ազատութիւն շնորհի։ Տելլը նստեց ուր հարկն էր և սկսեց ղեկավարել. բայց միևնոյն ժամանակ աչքի տակով նայեց տեսնի, թէ որտեղ է աղեղը. դրանից յետոյ աչքը դցեց ժայռերին և սկսեց ման դալ ու դտնել դուրս ցատկելու մի յարմար ժայռ։ Ցանկարծ նրա աչքովն ընկաւ վերեւը մի տափակ ժայռ։ Ալիքների գլխին կախ ընկած, մի դիք ու բարձր ժայռ էր և մեծ շնորք ու սիրտ էր հարկաւոր, որ մարդ կարողանար նաւակից այնտեղ ցատկել։

—Հը՜, տղե՛րք, ղչաղ ժամ եկէք, ղչաղ, գոռաց Տելլը թիավարներին դառնալով. մեր դժուարը մինչև այն ժայռն է, տեսնո՞ւմ էք. այնտեղ հասանք թէ չէ, էլ այնքան վախ չկայ։

Թիավարները, որքան իրանց ուժը կը պատէր, թիերին զոռ տուին և մի երկու բոպէ չանցած՝ նաւակը հասաւ իրանց ուզած տեղը։

Այդ ժամանակ Տելլը «ա՜յ Աստուած» ասելով ու իր ղէնքը ձեռք դցելով, ցատկեց ու

իրան գցեց Ժայռի գլուխը. իսկ նաւակն ոտքով գրոհ տուեց ու դցեց ալիքների բերանը:

Մի ձկնորս ու իր փոքրիկ որդին լճի ափին կանգնած՝ սարսափով նայում էին այս տեսարանին. նրանք տեսան թէ ինչ հրշաքով ազատուեց Տելլն ու հրճուանքով ողջունեցին այդ քաջասիրտ աղամարդուն: Նրանք պատմեցին Վիլհելմ Տելլին, որ նրա բռնելուց յետոյ շուտ-յարաշիք մի քիչ կոտրուել են:

— Դնա կնոջս մօտն ու ասա, որ ես ազատուել եմ, բայց դեռ թաք եմ կենալու. ով գիտէ, մի՛ գուցէ տեղակալն էլ ազատուի, ասաց Տելլը ձկնորսին, որը նոյնպէս մասնակցել էր Ռիւտլիում եղած խորհուրդին: Իսկ աներոջս և առհասարակ Ռիւտլիում եղածներին կ՚ասես, շարունակեց Տելլը, որ դարդ չանեն ու քէֆները քոք պահեն: Կ՚ասես որ Տելլի ձեռքը հիմա ազատ է, և նրա անունը կ՚ելնի ու նրա մասին ամենքն էլ կը սկսեն խօսել: Իսկ հիմա որդիդ թող առաջս ընկնի ու ինձ տանի Բրունին, որովհետև իմ այնտեղ լինելս հարկաւոր է:

Ինչքան էլ ձկնորսը հարցուփորձ արաց Տելլին, թէ գնում է Բրունին ի՞նչ անի, ինչ կայ, ինչ չկայ, որսորդը ոչինչ պատասխան չուտեց. երեխայի հետ միասին ճամբայ ընկաւ ու արագ արագ, նեղ կածանը բռնելով, գնաց

դէպի անտառը: Առանց հանգստանալու, համարեա վազելով երեք վերստ ճամբայ գնալուց յետոյ, նրանք հասան Բրունին: Այնտեղից մի զառիվայր ճամբայ տանում էր Կիւսնախտ. այստեղ ձկնորսի տղան Տելլին թողեց ու վերադարձաւ տուն:

Այս ճանապարհի երկու կողմն էլ մռայլ ժայռեր էին պատել. նրանցից մէկը, որ կորել էր թփերի մէջ, մի քիչ առաջ էր ցցուել. հէնց այդ տեղ կանգ առաւ մեր քաջ որսորդը թուլացած՝ նստեց քարէ նստարանի վրայ, որ շինուած էր յոգնած ճամբորդների համար: Վիլհելմ Տելլը մտքումը դրել էր որ մի կարական բան անի: Նա գիտէր որ, Ծէրը մի՛ արասցէ՝ տեղակալն եթէ դուրս գայ ափը, հէնց այս ճամբովն է գնալու Կիւսնախտ:

Տելլը մտքումը դրեց՝ թաք կենայ թփերի մէջ և այնտեղից նետով խփի ու սպանի հեսլերին. «ես էլ կը փախչեմ դէպի ժայռերը, կը թաքնուեմ ու նրա մարդկանց ձեռքիցը կը պրծնեմ», ասում էր ինքն իրան:

Մտածմունքների տակ նրա սիրտն այնպէս էր ճնշուած, որ կարծես թէ մի ծանր քար էին դրել վրան: Մինչև այսօրուան օրը Տելլը մարդու վրայ, մի անգամ էլ է, ձեռք չի բարձրացրել. միշտ սպանել վեր է դցել վայրի կենդանիների

և գաղանների, ուրիշ ոչինչ. իսկ հիմա իր նման մարդու պիտի սպանի, մարդասպանի անուն ստանայ։ Ախր մի բան էլ կայ. նա չարագործ Հեսլերի կատաղութիւնից պիտի պաշտպանի իր կնոջը, երեխաներին ու քաղցր հայրենիքը։ Այս մի նետով Տելլը կ'ազատի իր հայրենի երկիրը...

Նա երկար սպասեց. անհամբերութեամբ նայում էր դէպի ուղին և շատ նայելուց աչքերը ջուր կարեցին։ Մօտիկից մի քանի մարդ անց կացան, բայց ոչ մէկն էլ չէր իմանում, թէ տեղակալ Հեսլերը երբ է անցնելու։

Արմգարդա անունով մի գիւղացի կին էլ, իր փոքրիկ երեխաներն առած՝ դուրս եկաւ, կանգնեց ճամբին։ Այդ կինը լսել էր, որ այդտեղով անց է կենալու Հեսլերը և դրա համար էլ եկել էր այստեղ սպասելու մինչև նրա գալը, որ ընկնի նրա ոտները և խնդրի՝ իր մարդուն հանել տայ բանդից։ Տելլի և Արմգարդի մօտ մի քանի հոգի էլ հաւաքուեցին։ Ցանկարծ, մի ձիաւոր ձին քշելով, ճամբովն անց կացաւ, գոռալով՝ «տեղակա՞լը, տեղակալը գալիս է։»

Ինչպէս որ վերևն էլ ասինք, ժայռերից մէկը քիչ առաջ էր ցցել՝ դէպի ճամբան. այդ ժայռի գլուխը պատած էր թփերով։ Հէնց որ Տելլը ձիաւորի խօսքերը լսեց, իսկոյն տեղիցը

վեր ցատկեց, մտաւ թփերի մէջն ու կորաւ։ Իսկ գիւղացի կինն իր երեխաների հետ գնաց ճամբի մէջտեղը կանգնեց։

Վերջապէս դուրս եկաւ Հեսլերն իր զինակրի հետ միասին, երկուսն էլ ձի նստած։ Արմգարդան վազեց ձիերի դիմաց ու նրանց առաջը կարեց։

—Ի՞նչ ես ուզում. հեռու կաց ճամբից. ճամբայ տուր, գոռաց տեղակալը։

—Տէր, Աստուած սիրես, խեղճ եմ, ազատիր իմ մարդուն, արձակիր նրան, ասաց խեղճ կինը։ Նա գնում էր սարերը խոտ հարում, գրանով մեզ պահում։ Այժմ ահա վեց ամիս է, որ նա բերդումը նստած՝ քո դատաստանին է սպասում. մենք էլ առանց նրան մնացել ենք մի կտոր չոր հացի կարօտ ու քիչ է մնում քաղցածութիւնից մեռնենք։

—Հեռու կաց, կորիր, դէ՞. լաւ ժամանակ ես գտել. խօսք բան ունես ասելու, ե՛կ Կիւսնախտ. հիմա դրա ժամանակը չէ, ասում էր Հեսլերի զինակիրը։

Բայց կինը տեղիցը չէր շարժւում, կանգնել էր ու լաց էր լինում։

Հեսլերը բարկացաւ. հրամայեց որ բռնեն նրան. բայց Արմգարդան ձիու սանձը բռնելով, լացի ձայնով ասում էր.

—Չէ՛, ինչից եմ վախենում. էլ ի՞նչ ունեմ կորցնելու, որ կորցնեմ: Ինձ էլ, երեխաներիս էլ գցիր ձիուդ ոտների տակն ու կոխկրտիր: Աչքերդ չռում ես, կարծես վախենում եմ. ինչքան ուզում ես չռիր. տունս քանդել է ու պրծել. այնքան անբաղդութիւն տեսայ, որ էլ ինձանում յոյս չմնաց:

Եւ իսկ որ, Արմգարդան իր երեխաների ձեռքից բռնած՝ ընկաւ ձիերի առաջ ու գոռաց.

—Կոխ տուր, կոխ տուր որբ ու անտէր մնացած բալաներիս. քշիր, ձիդ քշիր ու անց կաց մեզանով: Մեռնենք ու պրծնենք քո ձեռքից լաւ է, քան թէ այսպէս ապրենք: Էլ բան չմնաց, որ դու մեր գլուխը չբերես: Սեւանայ քո օրը, ոնց որ մեր օրը սեւացրիր:

Հէնց այս միջոցին տեղակալի առաջ դուրս եկաւ մի զիւղական հարսանիք, իրանց դափուզուռնով: Հարսնիքաւորների խումբն այս սրտամտելիկ պատկերը տեսնելուն պէս՝ տեղնուտեղը սառեց ու կանգնեց. իսկ զուռնաչիների ձայնն այնպէս կտրուեց, որ կ'ասես փորներն ընկաւ:

—Էյ, ծառաներս, ո՞րտեղ էք. եկէք այս խելքից գնացած կնոջը քաշ տուէք, ճամբից հանէք. պապ թէ ոչ, ի՛սկ որ, ոտնակոխ կ'անեմ անց կը կենամ, բղաւում էր Հեսլերը: Այս ի՞նչ յանդգնութիւն է, ի՞նչ համարձակութիւն է.

այս էր մնացել. էլ հանգստութիւն չեն տալիս մարդու, ճամբան են բռնում, իրանց հարսանիք մարսանիքներով ճամբան կտրում: Անպիտաննե՞ր, շուն անիրաւներ, անիծածներ, ես ձեզ նշանց կը տամ, տեսէք ես ձեզ ինչ կ'անեմ. ձեր գլխին մի օյին բերեմ որ... այնպիսի՞ օրէնքներ հնարեմ ձեզ համար, այնպիսի պատիժներ, որ...

Բայց յանկարծ, դեռ խօսքը չվերջացրած, Հեսլերը ձեռքը տարաւ սրտին ու պինդ սեղմեց... նեարը դիպել էր սրտին: Նա մէկ այս կողմը, մէկ այն կողմը թեքուեց ու վեր ընկաւ ձիուց. «վա՜յ, սա Տելլի նետն էր». այս էր տեղակալ Հեսլերի վերջին խօսքերը:

Եւ ճշմարիտ որ, այդ բոպէին քարի գլխին երևաց Վիլհելմ Տելլը:

—Հը՞, ճանաչեցի՞ր նետ գցողին: Հիմա կ'ասեմ, որ սրանից յետոյ ազատ ենք, գերութեանը վերջ տւինք. մեր հայրենիքը պրծաւ քեզանից. էլ չես կարող վնաս տալ: Այս խօսքերն ասելով, Տելլը կորաւ ժայռերի մէջ:

Ամէն կողմից ժողովուրդը վազ էր տալիս դէպի ճամբան: Հարսանիքը ցրիւ եկաւ: Ամենքն էլ մեռնող տեղակալի չորս կողմը կտրեցին և նայում էին չարագործի վերջին տանջանքներին: Որ ասես, իսկի մէկն էլ տեղից չշարժուեց, թէ

ինչ է, նրան օգնութիւն հասցնի. ոչ մէկի երեսին ցաւակցութեան նշոյլ անգամ չերևաց: Դեռ այդ ոչինչ. հէնց որ նա իր վերջին շունչը փչեց, հարսանիքի զուռնաչիներն իսկոյն մի ժողովրդական ուրախ երգ սկսեցին ածել. ամենքը սկսեցին մէկմէկու վզովն ընկնել, իրար համբուրել, գոռալ ու գոչել.

«Ազա՞տ ենք, ազատ, ա՛յ եղբայրներ, բարեկամներ. մեր չարագործը սատկեց պրծաւ. սրանից յետոյ մենք ազա՞տ ենք նրանից, բոլորովին ազատ: Դէ՜, շո՛ւտ արէք, սարերումը կրակներ վառեցէք. դրանով ենք իրար նշան տալու: Ամեն մարդ թող զէնք վերցնի, գնում ենք. եկէք գնանք քանդենք բերդերը, աւերակ դարձնենք, կոտրատե՛նք նրանց դռները, փրշրե՛նք մեր գերի ընկած եղբայրների շղթաներն ու ազատենք նրանց»...

Բոլոր բազմութիւնը աղմուկով ցրիւ եկաւ. այն զառիվայր ճանապարհի վրայ մնաց միայն Հեսլերի զինակիրը, որ իր տիրոջ դիակի վրայ ընկած՝ լաց էր լինում:

Տելլի կին Հեդվիգը ուրախութեամբ լսեց, որ իր ամուսինը կենդանի է և շուտով դալու է տուն: Նա իր մարդուն արդէն մեռած էր համարում և շատ դառն արտասուք էր թափել նրա վրայ. իսկ այժմ իր երեխաների հետ

միասին սպասում էր նրա տուն դալուն. բայց հանդիստ չէր կարողանում սպասել: Սեղանի վրայ դրեց ընթրիքն ու կրակ վառեց, որ իր մարդը համ ցրտից տաքանայ, համ էլ նրա շորերը չորացնի:

—Երեխէ՛ք, կրկնում էր Հեդվիգն անդադար. գիտէ՞ք ինչ կայ. ախար այսօր հայրիկը դալու է, գիտէ՞ք թէ չէ. արդեօք իմանո՞ւմ էք, որ նա ազատուել է, որ մենք ամենքս էլ ազատուել ենք: Տեսնո՞ւմ էք՝ դուք ինչ հայր ունէք. նա փրկեց, ազատեց իր հայրենիքը: Նա մեր պարծանքն է. ձեր հօր անունովը պիտի պարծենաք, որդիքս:

Բայց փոքրիկ Վալտերն ուզում է ցոյց տայ, որ ինքն էլ կայ. չի ուզում, որ իրան մոռացած լինեն:

—Մա՛յրիկ, ասում է նա, գիտե՞ս, ախար հայրիկիս նետն իմ գլխի վրայից ժժժալով անց կացաւ. իսկ ես, որ ասես է՞, մի մալի չափ էլ չժուեցի:

—Վա՜յ, կծեմ քեզ, նաշխուն բալաս, անուշ ջան. է՛լի դու իմ կշտին ես. Ատաւած պապը քեզ պահեց ինձ համար, ասում էր մայրը՝ գրկելով երեխային:

—Մա՛յրի՛կ, մայրի՛կ, հայրիկն եկա՞ւ, հայրի՛կը, ուրախ ուրախ կանչեց փոքրիկը:

—Ո՞ւր է, ուր է, հարցրեց Հեղուիդը։ Նա մին ուզեց ամուսնու առաջը վազել. բայց տեղիցը չկարողացաւ շարժուել. ուրախութիւնից քիչ մնաց թէ վեր ընկնի. դռան շրջափայտից բռնելով, մի կերպ իրան պահեց։

Տէլլը մտաւ սենեակը. երեխայքն իսկոյն վազեցին ու հօր վզովը փաթաթուեցին։ Տէլլը գառնալով դէպի իր կինն՝ ասաց.

—Աղջի, Հեղուիդ, Աստուած մեզ օգնեց։ Դէ՜, հիմիկուանից դէնը էլ մենք անբաժան կը լինենք։

—Որ իմանայիր թէ որքա՜ն էի վախենում քեզ համար, ասում էր Հեղուիդը լալով ու գրկելով իր մարդուն։

—Դէ, լաւ, հանգստացիր, ամէն ինչ անց կացաւ պրծաւ. տեսնում ես, ես էլի ձեզ մօտ եմ, ձեզ հետ միասին։

—Հայրիկ, բա քո աղեղն ո՞ւր է, հարցրեց Վալտերը։

—Մի սուրբ տեղ եմ դրել, մատուռում, որդի՛ս. էլ որսի համար ինձ հարկաւոր չէ, պատասխանեց Տէլլը որդուն։

Հեղուիդը զարհուրած, յետ քաշուեց ամուսնուց՝ ասելով.

—Սպանեցի՞ր, ասա՛, դո՛ւ սպանեցիր... այս ձեռքը... մարդասպանի՞ ձեռք է...

—Այո, տեսնո՞ւմ ես, այս ձեռքն է փրկել մեր երկիրը. սա է ձեր պաշտպանը, ասաց Տէլլը համարձակօրէն։ Ես մաքուր խղճմտանքով եմ ձեռքս դէպի երկինքը բարձրացնում։

Հէնց այդ միջոցին ներս վազեց փոքրիկ Վիլհելմը. նա գնացել էր միւս սենեակը, որ հօր համար չոր շորեր բերի։

—Հայրիկ, կանչեց նա ներս վազելով, պապը գալիս է. նրա ետևիցն էլ մի մեծ բազմութիւն։ Քեզ են կանչում ու ասում են, որ դուրս գաս փողոցը։

Տէլլը կնոջ ու երեխաների հետ դուրս եկաւ դուռը։ Եւ իսկ որ, մեր քաջ որսորդի տան առաջ մեծ բազմութիւն էր հաւաքուել. Վալտեր Ֆիւրստն էլ նրանց մէջ էր։ Տէլլի որդիներն արդէն վազել էին ու գնացել նրա մօտ։ Բազմութեան մէջ կանայք էլ կային, երեխաներ էլ։ Կային և ազնուականներ, որոնք նոյնպէս խառնուել էին ապստամբների հետ։ Աղջիկները՝ ձեռքներին մի մեծ ծող բռնել ու ծայրին ցցել էին սպանուած հեսլերի գլխարկը, և ծիծաղելով ու ծաղր անելով առաջ էին գալիս. երաժիշտներն էլ իրանց փողերն էին փչում։

Հէնց որ Տէլլը տնից դուրս եկաւ, բազմութիւնն իսկոյն նրա առաջը կտրեց՝ կիսաշրջան կազմելով։ Երաժշտութիւնը, ծիծաղը,

ուրախութեան ձայներ, բոլորն էլ նոյն բոպէին կտուեցին։ Բազմութեան միջից առաջ եկաւ Տելլի աներ Վալտեր Ֆիւրստը, Միլխթալի և Շտաուֆախերի հետ. նրանք մօտեցան Տելլին սրտաշարժուած ու համբուրեցին նրան։

—Դէ՛, Վիլհելմ, մենք եկել ենք քեզ շնորհաւորենք ու շնորհակալութիւն անենք քեզանից։ Մեր հայրենիքը հիմա բոլորովին ազատ է։ Ամեն ինչ այնքան շուտ, և՛ այնքան էլ լաւ գլուխ եկաւ, որ մենք ինքներս իսկի յոյս չունէինք թէ այդպէս կը լինի։ Հէնց որ դու, տեղակալին սպանելուց յետոյ, փախար ու թաք կացար սարերումը, քեզանից յետոյ իսկոյն կրակներ վառեցին սարերում ու բերդերի վրայ յաձակուեցին։ Քո նետի ձայնն էր, որ ամենքի մէջ ապստամբութեան շարժում գցեց։ Մեր թշնամիները յաղթուեցին, ջարդուփշուր եղան. նրանց բոլոր բերդերն այժմ մեր ձեռքին է։ Այն բանը, որ մեր ձեռքով շինուած էինք մեզ համար, քանդեցինք ու աւերակ դարձրինք, հիմնովին աւերակ։ Տեղակալ Լանդսբերդը առաջ մէկ ուզեց փախչի, բայց Միլխթալն ընկաւ նրա ետեւից, հասաւ ու բռնեց, բերեց իր կուրացած հօր մօտ։ Ծերունին չէր ուզում նրան բաց թողնի, բայց Լանդսբերդը երդում կերաւ, որ էլ Շուեյցարիայում չի մնալու։ Մենք մենակ

թագաւորից էինք վախենում, բայց Աստուած նրան էլ իր արարմունքների համար պատիժ հասցրեց. իր եղբօրորդու ձեռքից խլել էր նրա ժառանգութիւնը. նա էլ խփել է նրան սպանել։ Եւ վերջապէս, թագաւորի այրի մնացած կնոջ կողմից էլ մարդ է եկել ու մի թուղթ բերել։ Այդ թղթով նա մեզ յետ է տալիս մեր առաջուան իրաւունքները։ Հիմա, ինչպէս տեսնում ես, Տելլ, սրանից յետոյ մենք ազատ ենք և հէնց դրա համար է, որ այսքան բազմութեամբ եկել ենք քեզ շնորհաւորելու, իբրև մեր ազատողին։ Տեսնում ես այս սարերը. քանի որ սրանք այստեղ են, իմացած լինես որ քո անունդ միշտ կը յիշուի, միշտ կը մնայ. երբեք չեն մոռանայ, որ Տելլը նետով խփեց ու իր հարազատ որդու գլխից թողրեց խնձորը, թէ Տելլն էր որ սպանեց Հեսլերին ու ազատեց Շուեյցարիան։

«Կեցցէ՛ մեր Տելլը, կեցցէ՛. կեցցէ՛ մեր փրկիչը, կեցցէ մեզ ազատողը, կեցցէ՛»... Այս աղմկալի գոռում գոչումներն ու փողերի ձայնը կարեցին Ֆիւրստի խօսքերը։

Հեռուում, չորս կողմի գիւղերի զանգակների ձայնը տարածուում էր ամեն կողմ. նրանց զընգզընգոցը բռնել էր սար ու ձոր և ամեն տեղ արձագանք էր տալիս։ Այստեղ ու այնտեղ

կրակներ էին վառւում ու պլպլում։ Ամեն կողմից լսւում էին ուրախ աղաղակները.

«Ո՞ւռա, հէյ, ո՞ւռա. ապա՜ռ ենք, ապա՜ռ. ապրի՜ Տելլը, ապրի՜. կրցէ՞ նա, կեցցէ՞»...

Այս բանը 1308 թուի Կաղանդի օրն էր։

Հ.Հ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0420565

14.560

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.